



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 21 (441) «12» օգոստոսի 2021թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

	<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ</b>	
480	«Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրականացվող մի շարք միջոցառումների մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2754-Ն հրամանագիրը.....	3
	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
481	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 14-ի N 619-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 797-Ն որոշումը.....	5
482	««Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան» և «Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի N 95 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 575 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 870-Ն որոշումը.....	6
483	««Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 875-Ն որոշումը.....	8
484	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 876-Ն որոշումը.....	10
485	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 23-ի N 121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 880-Ն որոշումը.....	11
486	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 39 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 882-Ն որոշումը.....	12
487	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 579-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 883-Ն որոշումը.....	14
488	«Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի	

	բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 884-Ն որոշումը.....	16
489	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի N 409-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 886-Ն որոշումը.....	28
490	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 891-Ն որոշումը.....	29
491	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 6-ի N 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 892-Ն որոշումը.....	30
492	«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրում հաշվառված քաղաքացու մահվան դեպքում թաղման նպաստ սահմանելու և թաղման նպաստի նշանակման ու վճարման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 893-Ն որոշումը.....	31
493	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 896-Ն որոշումը.....	35
494	«Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների նոր հերթական ընտրությունների նշանակման մասին» ԱՀ կառավարության N 900-Ն որոշումը.....	37
<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>		
495	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 178 հրամանը.....	40

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ՄԻ ՇԱՐՔ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7.1-ին և 16-րդ կետերը, 8.1-ին հոդվածի 2-րդ մասը և 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքն օգտագործման տրամադրել սույն հրամանագրով և Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված հատուկ կարգով և պայմաններով՝ առանց այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, Արցախի Հանրապետության կառավարության սահմանած առավելագույն վճարի սահմաններում.

2) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքն օգտագործել «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքով, սույն հրամանագրով և Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգին և պայմաններին համապատասխան՝ առանց այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, Արցախի Հանրապետության կառավարության սահմանած առավելագույն վճարի և (կամ) համարժեք փոխհատուցման սահմաններում:

2. Սույն հրամանագրի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված միջոցառման կիրառումն ապահովելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ լիազորված մարմինների՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթկառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության, Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի ներկայացուցիչների ներգրավմամբ:

3. Լիազորել հանձնաժողովին՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքին համապատասխան որոշել ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքն օգտագործման վերցնելու անհրաժեշտությունը:

4. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ տասնօրյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը:

5. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքի օգտագործման կարգն ու պայմանները:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝  
անմիջապես:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. օգոստոսի 12  
Ստեփանակերտ  
ՆՀ-2754-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

23 հունիսի 2021թ.

N 797-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 619-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 14-ի «2021 թվականի ամառային գորակոչը կազմակերպելու մասին» N 619-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածում «Ինեսա Միքայելի Ադամյան» բառերը փոխարինել «Արգինե Վալերիի Ալեքսանյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունիսի 14-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2021թ.

N 870-Ն

ք. Ստեփանակերտ

**«ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐԶԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ԵՎ  
«ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ,  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 95 ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 28-Ի N 575 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը և 25-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան» և «Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություններ):

2. Կազմակերպությունների աշակերտներին տեղափոխել «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր» հիմնադրամ և սահմանել, որ ուսումն ավարտելուց հետո տեղափոխված ուսանողներին կշնորհվի «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր» հիմնադրամի ավարտական փաստաթուղթ:

3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և Ստեփանակերտի քաղաքապետին՝ ըստ ենթակայության ապահովել.

1) կազմակերպությունների լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով 10-օրյա ժամկետում լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

2) լուծարման հանձնաժողովի ստեղծումից հետո մեկամսյա ժամկետում կազմակերպությունների համապատասխան փաստաթղթերի, սեփականության իրավունքով պատկանող գույքի հանձնումը լուծարման հանձնաժողովին.

3) լուծարման հանձնաժողովի կողմից կազմված լուծարման հաշվեկշիռների հաստատումը.

4) կազմակերպությունների լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով կազմակերպությունների գործունեության դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ միջոցները:

4. Սահմանել, որ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած՝

1) դրամական միջոցներն ուղղվելու են Արցախի Հանրապետության պետական բյուջե.

2) այլ գույքն ամրացվելու է «Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

5. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի «Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու թիվ 3 արհեստագործական ավագ դպրոցը վերակազմավորման ձևով «Մարտունու արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, «Ստեփանակերտի պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության արհեստագործական ավագ դպրոցը արհեստագործական ուսումնարան վերանվանելու և «Արցախի Հանրապետության արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 95 որոշման 1-ին կետը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 575 որոշմամբ հաստատված հավելվածի ցանկի 4-րդ կետը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա 5-րդ կետը՝ կազմակերպությունների գործունեության դադարեցման պետական գրանցման պահից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

9 օգոստոսի 2021թ.

N 875-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ և 17-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր ո շ ու մ է.**

1. Ստեղծել «Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով բնակարանային հարցերի վարչությունը (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ) և այն միացնել «Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

3. Արցախի Հանրապետության պետական նախարարին, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարին ու Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի նախագահին՝ Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել համապատասխանաբար Արցախի Հանրապետության պետական նախարարի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության կանոնադրությունում ու աշխատակազմի կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին, Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը՝ մեկշաբաթյա ժամկետում, Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի աշխատակազմին ամրացվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը՝ մեկամսյա ժամկետում:

4. Սահմանել, որ՝

1) «Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հանդիսանում է «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ վերակազմակերպմանը համապատասխանող բնագավառի իրավահաջորդը:

2) «Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի նպատակներն ու խնդիրներն են՝ Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններում նրա մասնակցության ապահովումը:



5. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ վերաբաշխումներ կատարել Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում՝ տասնօրյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2021թ.

N 876-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,03 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 880-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 23-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 121-Ն որոշման հավելվածի 30-րդ և 32-րդ կետերի 4-րդ սյունակներում համապատասխանաբար «Երկրորդ» և «Երրորդ» բառերը փոխարինել «Չորրորդ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 882-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին» N 39 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ գործողությունը տարածվում է 2021 թվականի հունիսի մեկից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի օգոստոսի 10-ի N 882-Ն որոշման

«Հավելված 2  
ԼՂՀ կառավարության  
«24» հունվարի 2006թ. թիվ 39 որոշման

**Կ Ա Ջ Մ**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արայիկ Հարությունյան-Արցախի Հանրապետության Նախագահ (Խորհրդի նախագահ)
2. Արմեն Թովմայան-Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարար
3. Տիգրան Առստամյան-Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի տեղակալ
4. Բենիկ Բախշիյան-Արցախի Հանրապետության Նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ՝ տնտեսության և տարածքային կառավարման գծով (հասարակական հիմունքներով)»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 883-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 579-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման իրականացման կարգը հաստատելու մասին» N 579-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 2-րդ կետի

ա. 1-ին ենթակետում «բանկերին» բառից առաջ լրացնել «համայնքներին, պետության կողմից ստեղծված կազմակերպություններին,» բառերը,

բ. 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) գորահավաքային գորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստագորային ֆիզիկական անձանց կամ նրանց ամուսիններին կամ գորամասի կամ մարտական խնդրի կատարման վայրերը մինչև 2020 թվականի նոյեմբերի 10-ը ինքնակամ լքած անձանց կամ նրանց ամուսիններին: Չորահավաքային գորակոչով չներկայացած Արցախի Հանրապետության պահեստագորայինների և գորամասի կամ մարտական խնդրի կատարման վայրերը մինչև 2020 թվականի նոյեմբերի 10-ը ինքնակամ լքած անձանց անվանացուցակները Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) է տրամադրվում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից.»

2) 3-րդ կետում

ա. 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) նյութական վնաս կրած անձի (լիազորված անձի միջոցով դիմումը ներկայացնելու դեպքում՝ նաև լիազորվածի անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի պատճենները և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը) անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի և ամուսնության վկայականի պատճենները կամ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում (այսուհետ՝ ՔԿԱԳ) իրականացնող մարմնի կողմից տեղեկանք՝ ամուսնության ակտի գրանցման բացակայության մասին.»

բ. 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի և իրավաբանական անձի մասնակիցների (բաժնետերերի) անձնագրերի և հանրային ծառայությունների համարանիշների կամ սոցիալական քարտերի և ամուսնության վկայականների պատճենները կամ ՔԿԱԳ իրականացնող մարմնի կողմից տեղեկանքներ՝ ամուսնության ակտի գրանցման բացակայության մասին (բացառությամբ Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց), իրավաբանական անձանց պետական

ռեզիստրի իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից տեղեկանք՝ գործադիր մարմնի ղեկավար հանդիսանալու մասին, քաղվածք Բաժնետերերի ռեեստրից՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ վկայականը կամ քաղվածքը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).».

գ. լրացնել 3.1-ին ենթակետ.

«3.1) տեղեկանք՝ անվտանգության առումով այգիներում ագրոմիջոցառումներ իրականացնելու անհնարինության մասին՝ տրված շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից.».

դ. 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4) կորսված կամ վնասված գույքի նկատմամբ սեփականության կամ ֆինանսական վարձակալության (լիզինգ) պայմանագրով վարձակալության իրավունքը հավաստող փաստաթղթեր, իսկ այգիների դեպքում՝ նաև վարձակալության կամ օրենքով չարգելված եղանակով ձեռքբերված, սակայն իրավունքի պետական գրանցում չստացած հողամասերի իրադրական հատակագիծ՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից և իրավահաստատող փաստաթղթեր՝

ա. հողի սեփականաշնորհման վկայական.

բ. քաղվածք՝ հողի սեփականաշնորհման և բարեփոխումների նիստի արձանագրությունից.

գ. մինչև 2008 թվականի հունիսի 22-ը կնքված՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ հաստատող պայմանագրեր.».

ե. 6-րդ ենթակետի «գ» պարբերությունում «պտղատու այգիների, խաղողայգիների» բառերը փոխարինել «այգիների» բառով.

3) 8-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) Միջոցառման 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ գույքի լրիվ կորստի դեպքում՝ վնասը գնահատվում է հասարակական շենքերի, շինությունների համար՝ դրանց կադաստրային արժեքի եռապատիկի չափով, արտադրական շենքերի, շինությունների համար՝ դրանց կադաստրային արժեքի յոթնապատիկի չափով, մասնակի վնասի դեպքում՝ կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով, իսկ աջակցության չափը՝ գնահատված վնասի և դրանց հետ կապված Ծրագրով ստացված (ստացման ենթակա) աջակցության չափի դրական տարբերության չափով, բայց ոչ ավել, քան 100 000 000 ՀՀ դրամը.».

բ. 5-րդ ենթակետի «գ» պարբերությունում «60 000» թիվը փոխարինել «30 000» թվով, իսկ «դ» պարբերությունում «50 000» թիվը փոխարինել «30 000» թվով,

գ. 6-րդ ենթակետի «պտղատու այգիների, խաղողայգիների» բառերը փոխարինել «այգիների» բառով, իսկ «ա» և «բ» պարբերություններից հանել «պտղատու» բառը:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 884-Ն

ք. Ստեփանակերտ

**ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ, ԱՐՎԵՍՏԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱՊԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել

1) գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում ստեղծել գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել դրա կազմն ու գործունեության կարգը.

2) հանձնաժողովի կազմը նախատեսել ոչ պակաս, քան 11 անդամ՝ հանձնաժողովի կազմում ներառելով ներկայացուցիչներ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ու Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունից, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառների հեղինակավոր մասնագետների.

3) ապահովել հանձնաժողովի գործունեության կարգի, ինչպես նաև դրանում կատարվող հետագա փոփոխությունների և լրացումների համաձայնեցումը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ.

4) ապահովել հանձնաժողովի կազմի և գործունեության կարգի, հանձնաժողովի կայացրած եզրակացությունների հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում՝ դրանց կայացման օրվանից 3-օրյա ժամկետում:



3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ  
ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի համաձայն քաղաքացուն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ստեղծված հանձնաժողովի՝ սույն կարգի համաձայն կայացրած եզրակացությունը հաշվի առնելով: Հանձնաժողովը նախարարին կից խորհրդակցական մարմին է, և նրա կայացրած եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ:

3. Սույն կարգի համաձայն գիտության և կրթության բնագավառներում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նպատակով քաղաքացին կարող է տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն): Դիմումին կից ներկայացվում են քաղաքացու անձը և սույն կարգի համաձայն գիտության և կրթության բնագավառներում քաղաքացու գործունեությունը հաստատող, ինչպես նաև գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքներ պարունակող (նկարագրող) փաստաթղթերի բնօրինակները և դրանց պատճենները, իսկ սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերում նշված օլիմպիադաների, գիտաժողովների, մրցանակաբաշխությունների անցկացումը տվյալ տարվա մայիսի 1-ից կամ նոյեմբերի 1-ից հետո մինչև համապատասխան զորակոչի ավարտը նախատեսված լինելու դեպքում դիմումում նշվում է նաև քաղաքացու կողմից դրանց մասնակցության մասին, և դիմումին կցվում են մասնակցությունը հաստատող փաստաթղթերը: Սույն կետով նախատեսված համապատասխան ժամկետներից հետո ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման, և դիմումի ստացման օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են դիմումատուին՝ նշելով դիմումը վերադարձնելու հիմքը: Հանձնաժողովի կողմից բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են դիմումատուին: Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է նախարարության աշխատակազմի միջոցով:

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են դիմումների առկայության դեպքում՝ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ, ընդ որում, մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ներկայացված դիմումների քննարկման մասով վերջին նիստը պետք է տեղի ունենա ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա մայիսի 15-ը, իսկ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացված դիմումների քննարկման մասով վերջին նիստը՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նոյեմբերի 15-ը: Հանձնաժողովի կողմից եզրակացություններն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների 2/3-ով: Հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում են: Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև դիմում ներկայացրած քաղաքացին կամ նրա ծնողները կամ նրա կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր քաղաքացու մասով՝ մեկ անձից ոչ ավելի: Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև նիստն սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին: Յուրաքանչյուր նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում հանձնաժողովի եզրակացությունները, նիստի արձանագրությունը և ստացված դիմումներն ու կից փաստաթղթերը ներկայացվում են նախարարին՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով

Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակելու և շրջանառելու կամ դիմումը մերժելու համար՝ նշելով մերժման հիմքերը: Հանձնաժողովի եզրակացությունները եռօրյա ժամկետում ուղարկվում են նաև դիմում ներկայացրած համապատասխան քաղաքացիներին: Հանձնաժողովի եզրակացությունների ձևերը սահմանվում են հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին նախարարի հրամանով: Քաղաքացին կարող է հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ առարկություններ ներկայացել նախարարին՝ եզրակացությունն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն կարգի 4-րդ կետի համաձայն մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ներկայացված դիմումների մասով նախարարության կողմից Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերը պաշտոնապես շրջանառության մեջ կարող են դրվել ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հուլիսի 1-ը, իսկ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացված դիմումների մասով՝ ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված համապատասխան օլիմպիադաները, գիտաժողովները, մրցանակաբաշխությունները տվյալ տարվա մայիսի 1-ից կամ տվյալ տարվա նոյեմբերի 1-ից հետո մինչև համապատասխան գորակոչի ավարտը տեղի ունենալու դեպքերի, որոնց պարագայում Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծը շրջանառության մեջ է դրվում դրանց մասնակցության արդյունքում քաղաքացու կողմից սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերում նշված արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը նախարարությանը փոխանցելու օրվանից ոչ ուշ, քան 3-օրյա ժամկետում: Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը պաշտոնապես շրջանառության մեջ դնելու օրը որոշման նախագիծը տեղադրվում է նաև նախարարության պաշտոնական կայքում հրապարակային քննարկման նպատակով: Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծում ընդգրկվում են նաև հանձնաժողովի կողմից նախկինում դրական եզրակացություն ստացած, սակայն Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ տարկետում չստացած քաղաքացիները, որոնց վերաբերյալ հանձնաժողովը նոր եզրակացություն չի ընդունում:

6. Սույն կարգի համաձայն հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած, սակայն այլ հիմքով տարկետման իրավունքից օգտվող քաղաքացիներն ընդգրկվում են Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծում, որով նշված քաղաքացիների համար տարկետումն ուժի մեջ է մտնում այլ հիմքով ստացած տարկետումը դադարելու օրվանից:

## **2. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

7. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից կարող են տարկետում ստանալ սույն կարգով սահմանված նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիները:

8. Բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացիների նշանակալի նվաճումներ են համարվում հանձնաժողովին դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում՝

1) քաղաքացու ստացած մրցանակները (ոսկե կամ արծաթե կամ բրոնզե մեդալներ) դպրոցականների հետևյալ առարկայական միջազգային օլիմպիադաներում՝

- ա. «International Mathematikal Olympiad, IMO»՝ մաթեմատիկա առարկայից.
- բ. «International Physics Olympiad, IPhO»՝ ֆիզիկա առարկայից.
- գ. «International Chemistry Olympiad, IChO»՝ քիմիա առարկայից.
- դ. «International Olympiad in Informatics, IOI»՝ ինֆորմատիկա առարկայից.
- ե. «International Biology Olympiad, IBO»՝ կենսաբանություն առարկայից.
- զ. «International Philosophy Olympiad, IPO»՝ փիլիսոփայություն առարկայից.
- է. «International Astronomy Olympiad, IAO»՝ աստղագիտություն առարկայից.
- ը. «International Olympiad on Astronomy and Astrophysics, IOAA»՝ աստղագիտություն և աստղաֆիզիկա առարկաներից.
- թ. «International Geography Olympiad, IGeO»՝ աշխարհագրություն առարկայից.
- ժ. «International Linguistics Olympiad, ILO»՝ լեզվաբանություն առարկայից.
- ժա. «International Junior Science Olympiad, IJSO»՝ բնագիտություն առարկայից.

ժբ. «International Earth Science Olympiad, IESO»՝ երկրի մասին գիտություն առարկայից.

2) քաղաքացու կողմից հայոց լեզու կամ հայ գրականություն կամ հայ ժողովրդի պատմություն առարկաներից դպրոցականների հանրապետական օլիմպիադաներում 1-ին տեղը գրաված լինելու հանգամանքը:

9. Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների նշանակալի նվաճումները գնահատվում են ըստ

1) դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում տվյալ մասնագիտության գծով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես նաև բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական հոդվածների.

2) դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում տվյալ մասնագիտության գծով գիտաժողովների զեկույցների.

3) դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում ստացած գիտակրթական մրցանակների.

4) ուսումնառության շրջանակներում միջին որակական գնահատականի (ՄՈԳ) (մագիստրատուրայի համար՝ բակալավրի, իսկ ասպիրանտուրայի համար՝ մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառության շրջանակներում), որը պետք է կազմի ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 80 տոկոսը:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված նշանակալի նվաճումները հանձնաժողովի կողմից հաշվարկվում են բալային միավորների համակարգով առավելագույնը 80 բալային միավորի սահմանաչափով, նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության հիման վրա՝ համաձայն ձևի: Մագիստրոսի կրթական ծրագրի շրջանակներում տարկետման իրավունքի հավակնություն են ձեռք բերում առնվազն 49, իսկ ասպիրանտական կրթական ծրագրի շրջանակներում՝ առնվազն 51 բալային միավոր հավաքած քաղաքացիները:

11. Նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման [www.shanghairanking.com](http://www.shanghairanking.com) կայքի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և այլ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝ կրթաթոշակի առնվազն 70 տոկոսի վերաբերյալ փաստաթղթերի առկայությամբ, բացառությամբ՝ անվճար կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունների:

12. Սույն կարգի համաձայն գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ տարկետում տրվում է համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ժամկետով՝ սակայն ոչ ավելի, քան մինչև քաղաքացու 26 տարին լրանալու օրը:

13. Ստացած տարկետման ժամկետի ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 30-ը քաղաքացին կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը նախարարություն և քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացրած ստորաբաժանում են ներկայացնում համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքները՝ հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ:

14. Տրված տարկետման ժամկետի ընթացքում ուսումնառությունը դադարեցվելու, ինչպես նաև սույն կարգի 13-րդ կետով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքերում նախարարը Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում քաղաքացուն տրված տարկետումը դադարեցնելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որի ընդունումից հետո քաղաքացին կորցնում է տարկետման իրավունքը և ենթակա է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի՝ օրենքով սահմանված կարգով:

15. Սույն կարգի համաձայն գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն յուրաքանչյուր կրթական ծրագրով ուսումնառության համար տարկետում կարող է տրվել մեկ անգամ:

16. Սույն կարգի հիման վրա գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումների համար ասպիրանտական կրթական ծրագրի շրջանակներում տարկետում ստացած և գիտական աստիճան ունեցող քաղաքացուն

սույն կարգի պահանջների համաձայն և ասպիրանտուրայում ուսումնառության ընթացքում սույն կարգով սահմանված՝ ասպիրանտական կրթական ծրագրով տարկետում ստանալու համար անհրաժեշտ նշանակալի նվաճումների ցուցանիշներն ապահովելու և պետական գիտակրթական հաստատությունում կամ գիտական կազմակերպությունում գիտամանկավարժական կամ գիտական գործունեություն իրականացնելու դեպքում Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տրամադրվել տարկետում՝ սակայն ոչ ավելի, քան մինչև քաղաքացու 26 տարին լրանալու օրը:

17. Սույն կարգի համաձայն գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումների համար տարկետում ստացած ու տարկետման ժամկետի ավարտից հետո պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիները կարող են մասնակցել զինված ուժերի գիտական ստորաբաժանման համալրման մրցույթին և այլ հավասար պայմանների ապահովման դեպքում՝ օգտվել այդ ստորաբաժանումում ծառայության նշանակվելու նախապատվության իրավունքից:

**Ձև**

**Մ Ե Թ Ո Ղ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ**

1. Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող քաղաքացիների նշանակալի նվաճումների ցուցանիշները հաշվարկվում են հետևյալ չափորոշիչների և դրանց վերապահվող միավորների հիման վրա՝

1) Գիտական հրատարակումներ (հոդվածներ): Գիտական հոդված՝ «Web of Knowledge» և «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես նաև բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված ամսագրում հրատարակված՝ հղման ենթակա հոդված.

$$E_1 = \sum A \frac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}},$$

որտեղ յուրաքանչյուր հրատարակման (հոդվածի) համար՝

A-ն գիտատեղեկատվական շտեմարաններում ամսագրի ընդգրկվածությամբ որոշվող գործակիցն է՝

IF*	որոշված չէ	<0.2	0.2-0.5	0.5-1.0	1.0-2.0	2.0-5.0	>5.0
A**	3	5	10	13	15	17	20

\*) IF-ն ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցն է՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների.

\*\* ) Սահմանային արժեքի դեպքում վերցվում է առավելագույնը.

C-ն հղումների քանակն է՝ առանց ինքնահղումների.

N-ը համահեղինակների կամ համամրցանակակիրների ընդհանուր թիվն է:

2) Գիտաժողովների զեկույցներ: Հաշվի է առնվում միայն համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում:

$$E_2 = \sum T \frac{1}{N^{1/3}},$$

Յուրաքանչյուր զեկույցի համար՝

T=3,00՝ արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի զեկույց.

T=2,00՝ Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի զեկույց.

T=1,00՝ Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ոչ միջազգային գիտաժողովի զեկույց:

3) Գիտակրթական մրցանակներ: Գիտակրթական մրցանակ՝ միջազգային գիտական կամ գիտակրթական, Արցախի Հանրապետության կամ օտարերկրյա պետության պետական, Արցախի Հանրապետության Նախագահի, Արցախի

Հանրապետության Նախագահի երիտասարդական, «Արցախի Հանրապետության լավագույն ուսանող» մրցանակներ, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում Արցախի Հանրապետության Նախագահի կրթական պարգև: Հաշվի է առնվում միայն համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում:

$$E_3 = \sum \text{Pr} \frac{1}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր մրցանակի համար՝

Pr=10,00՝ միջազգային գիտական կամ գիտակրթական մրցանակ (ճանաչված միջազգային գիտական մրցանակ, միջազգային ուսանողական օլիմպիադաների 1-3-րդ տեղեր):

Pr=5,00՝ Արցախի Հանրապետության կամ օտարերկրյա որևէ պետության պետական մրցանակ.

Pr=4,00՝ Արցախի Հանրապետության Նախագահի մրցանակ.

Pr=1,00՝ Արցախի Հանրապետության Նախագահի երիտասարդական, «Արցախի Հանրապետության լավագույն ուսանող» մրցանակներ, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում Արցախի Հանրապետության Նախագահի կրթական պարգև:

4) Միջին որակավորման գնահատականը՝ E<sub>4</sub>-ը, հաշվարկվում է բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված փաստաթղթի հիման վրա՝ հետևյալ բանաձևով՝

$$E_4 = \frac{\text{ՄՈԳ}}{\text{ԱՄՈԳ}} \times 20,$$

որտեղ՝

ՄՈԳ-ը՝ հայցորդի միջին որակական գնահատականն է.

ԱՄՈԳ-ը՝ տվյալ ԲՈՒՀ-ի միջին որակական գնահատականի առավելագույն արժեքն է:

5) Չափորոշիչներից յուրաքանչյուրին վերապահվող միավորների առավելագույն արժեքը 20 միավոր է:

6) Նշանակալի նվաճումների ցուցանիշը հաշվարկվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$E = k_1 E_1 + k_2 E_2 + k_3 E_3 + k_4 E_4,$$

որտեղ՝

E-ն քաղաքացու նշանակալի նվաճումների ցուցանիշն է.

E<sub>1</sub>, E<sub>2</sub>, E<sub>3</sub>, E<sub>4</sub>-ը դրա հաշվարկման համար հիմք ծառայած չափորոշիչներից ստացված միավորներն են.

k<sub>1</sub>, k<sub>2</sub>, k<sub>3</sub>, k<sub>4</sub>-ը համամասնության գործակիցն է:

Համամասնության գործակիցները բարձրագույն կրթության մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերի համար որոշվում են ըստ հետևյալ աղյուսակի՝

Կրթական ծրագիրը	Համամասնության գործակցի արժեքը			
	K <sub>1</sub>	K <sub>2</sub>	K <sub>3</sub>	K <sub>4</sub>
Մագիստրատուրա	0.5	0.5	0.6	2.4
Ասպիրանտուրա	1.0	0.5	0.5	2.0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ  
ՈՒՆԵՅՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի համաձայն քաղաքացուն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տրվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ստեղծված հանձնաժողովի՝ սույն կարգի համաձայն կայացրած եզրակացությունը: Հանձնաժողովը նախարարին կից խորհրդակցական մարմին է, և նրա կայացրած եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ:

3. Սույն կարգի համաձայն մշակույթի և արվեստի բնագավառներում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու համար քաղաքացին կարող է տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն): Դիմումին կից ներկայացվում են քաղաքացու անձը և սույն կարգի համաձայն մշակույթի և արվեստի բնագավառներում քաղաքացու գործունեությունը հաստատող փաստաթղթերի բնօրինակները և դրանց պատճենները, ինչպես նաև մշակույթի և արվեստի բնագավառների առնվազն երկու հեղինակավոր գործիչների (Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ) երաշխավորագրեր, իսկ սույն կարգի 6-րդ կետում նշված մրցույթների, մրցանակաբաշխությունների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների անցկացումը տվյալ տարվա մայիսի 1-ից կամ նոյեմբերի 1-ից հետո մինչև համապատասխան գորակոչի ավարտը նախատեսված լինելու դեպքում դիմումում նշվում է նաև քաղաքացու կողմից դրանց մասնակցության մասին և դիմումին կցվում են մասնակցությունը հաստատող փաստաթղթերը: Սույն կետում նախատեսված համապատասխան ժամկետներից հետո ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման և դիմումի ստացման օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հետ են վերադարձվում դիմումատուին՝ նշելով դիմումը հետ վերադարձնելու հիմքը: Հանձնաժողովի կողմից բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են դիմումատուին: Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է նախարարության աշխատակազմի միջոցով:

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են դիմումների առկայության դեպքում՝ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ, ընդ որում, մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ներկայացված դիմումների քննարկման մասով վերջին նիստը պետք է տեղի ունենա ոչ ուշ, քան տվյալ տարվա մայիսի 15-ը, իսկ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացված դիմումների քննարկման մասով վերջին նիստը՝ ոչ ուշ, քան տվյալ տարվա նոյեմբերի 15-ը: Հանձնաժողովի կողմից եզրակացություններն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների 2/3-ով: Հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում են, հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև դիմում ներկայացրած քաղաքացին կամ նրա ծնողները կամ նրա կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր քաղաքացու մասով՝ մեկ անձից ոչ ավելի: Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև նիստն սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին: Յուրաքանչյուր նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում հանձնաժողովի եզրակացությունները, նիստի արձանագրությունը և ստացված դիմումներն ու կից փաստաթղթերը ներկայացվում են

նախարարին՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակելու և շրջանառելու կամ դիմումը մերժելու համար՝ նշելով դիմումի մերժման հիմքերը: Հանձնաժողովի եզրակացությունները եռօրյա ժամկետում ուղարկվում են նաև դիմում ներկայացրած համապատասխան քաղաքացիներին: Հանձնաժողովի եզրակացությունների ձևերը սահմանվում են հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին նախարարի հրամանով: Հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ քաղաքացին կարող է առարկություններ ներկայացնել նախարարին՝ եզրակացությունն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն կարգի 4-րդ կետի համաձայն մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ներկայացված դիմումների մասով նախարարության կողմից Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերը պաշտոնապես շրջանառության կարող են դրվել ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 1-ը, իսկ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացված դիմումների մասով՝ ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը, բացառությամբ սույն կարգի 3-րդ կետում նախատեսված՝ համապատասխան մրցույթները, մրցանակաբաշխությունները, փառատոները, ցուցահանդեսները, համերգները տվյալ տարվա մայիսի 1-ից կամ տվյալ տարվա նոյեմբերի 1-ից հետո մինչև համապատասխան գորակոչի ավարտը տեղի ունենալու դեպքերի, որոնց դեպքում Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծը շրջանառության է դրվում դրանց մասնակցության արդյունքում քաղաքացու կողմից սույն կարգի 6-րդ կետում նշված արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը նախարարությանը փոխանցելու օրվանից ոչ ուշ, քան 3-օրյա ժամկետում: Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը պաշտոնապես շրջանառության դնելու օրը որոշման նախագիծը տեղադրվում է նաև նախարարության պաշտոնական կայքում՝ հրապարակային քննարկման նպատակով:

**2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ  
ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

6. Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող են համարվում՝

1) կատարողական արվեստի բնագավառի մրցույթային կարգով անցկացվող միջազգային հեղինակավոր՝ առնվազն մեկ նախագծի (մրցույթներ, մրցանակաբաշխություններ, փառատոներ, ցուցահանդեսներ) հաղթող կամ մրցանակակիր դարձած ու մշակույթի և արվեստի բնագավառներում օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության պատվավոր կոչում ստացած քաղաքացիները:

2) կատարողական արվեստի բնագավառի մրցույթային կարգով անցկացվող միջազգային հեղինակավոր՝ առնվազն երկու նախագծերի (մրցույթներ, մրցանակաբաշխություններ, փառատոներ, ցուցահանդեսներ) հաղթողներ կամ մրցանակակիրներ դարձած քաղաքացիները:

3) միջազգային հեղինակավոր հարթակներում (բեմերում) և խոշոր միջոցառումներում (փառատոներ, համերգներ, ցուցահանդեսներ) պարբերաբար հանդես եկող քաղաքացիները:

7. Սույն կարգի 6-րդ կետում նախատեսված պայմանները բավարարող քաղաքացուն Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ տարկետում տրվում է երկու տարի ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև քաղաքացու 26 տարին լրանալու օրը:

8. Քաղաքացուն տրված տարկետման ժամկետի ավարտից հետո մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումների համար քաղաքացուն կրկին կարող է տրվել տարկետում՝ սույն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով, ընդ որում, կրկին տարկետում տալու հարցը սույն կարգի պահանջներին համապատասխան քննարկելիս հաշվի չեն առնվում նախկինում տարկետում տրամադրելու համար հիմք ընդունված պայմանները, բացառությամբ մշակույթի և արվեստի բնագավառներում օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության պատվավոր կոչում ունենալու պայմանի:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



**ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի համաձայն քաղաքացուն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ստեղծված հանձնաժողովի՝ սույն կարգի համաձայն կայացրած եզրակացությունը հաշվի առնելով: Հանձնաժողովը նախարարին կից խորհրդակցական մարմին է, և նրա կայացրած եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ:

3. Սույն կարգի համաձայն սպորտի բնագավառում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նպատակով քաղաքացին, իսկ թիմային մարզաձևերի շրջանակներում՝ նաև համապատասխան մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահը, կարող են տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն): Դիմումին կից ներկայացվում են քաղաքացու անձը և սույն կարգի համաձայն սպորտի բնագավառում նշանակալի նվաճումները հաստատող փաստաթղթերի բնօրինակները և դրանց պատճենները, իսկ սույն կարգի 5-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված առաջնությունների, խաղերի, ունիվերսիադանների անցկացումը տվյալ տարվա մայիսի 1-ից կամ նոյեմբերի 1-ից հետո մինչև համապատասխան զորակոչի ավարտը նախատեսված լինելու դեպքում դիմումում նշվում է նաև քաղաքացու կողմից դրանց մասնակցության մասին, և դիմումին կցվում են մասնակցությունը հաստատող փաստաթղթերը: Սույն կետով նախատեսված համապատասխան ժամկետներից հետո ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման և դիմումի ստացման օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են դիմումատուին՝ նշելով դիմումը վերադարձնելու հիմքը: Հանձնաժողովի կողմից բնօրինակ փաստաթղթերը համեմատվում են դրանց պատճենների հետ, որից հետո բնօրինակ փաստաթղթերը վերադարձվում են դիմումատուին: Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է նախարարության աշխատակազմի միջոցով:

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են դիմումների առկայության դեպքում՝ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ, ընդ որում, մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ներկայացված դիմումների քննարկման մասով վերջին նիստը պետք է տեղի ունենա ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա մայիսի 15-ը, իսկ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացված դիմումների քննարկման մասով վերջին նիստը՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նոյեմբերի 15-ը: Հանձնաժողովի կողմից եզրակացություններն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների 2/3-ով: Հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում են: Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև դիմում ներկայացրած քաղաքացին կամ նրա ծնողները կամ նրա կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր քաղաքացու մասով՝ մեկ անձից ոչ ավելի: Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել նաև հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ և լրագրողներ, որի վերաբերյալ վերջիններս մինչև նիստն սկսվելը տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին: Յուրաքանչյուր նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում հանձնաժողովի եզրակացությունները, նիստի արձանագրությունը և ստացված դիմումներն ու կից փաստաթղթերը ներկայացվում են նախարարին՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակելու և

շրջանառելու կամ դիմումը մերժելու համար՝ նշելով մերժման հիմքերը: Հանձնաժողովի եզրակացությունները եռօրյա ժամկետում ուղարկվում են նաև դիմում ներկայացրած համապատասխան քաղաքացիներին: Հանձնաժողովի եզրակացությունների ձևերը սահմանվում են հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին նախարարի հրամանով: Քաղաքացին կարող է հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ առարկություններ ներկայացել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ եզրակացությունն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն կարգի 2-րդ կետի համաձայն մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը ներկայացված դիմումների մասով նախարարության կողմից Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերը պաշտոնապես շրջանառության մեջ կարող են դրվել ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը, իսկ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացված դիմումների մասով՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը՝ բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված համապատասխան առաջնությունները, խաղերը, ունիվերսիադաները տվյալ տարվա մայիսի 1-ից կամ տվյալ տարվա նոյեմբերի 1-ից հետո մինչև համապատասխան գորակոչի ավարտը տեղի ունենալու դեպքերի, որոնց պարագայում Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծը շրջանառության մեջ է դրվում դրանց մասնակցության արդյունքում քաղաքացու կողմից սույն կարգի 6-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը նախարարությանը փոխանցելու օրվանից ոչ ուշ՝ քան 3-օրյա ժամկետում: Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը պաշտոնապես շրջանառության մեջ դնելու օրը որոշման նախագիծը տեղադրվում է նաև նախարարության պաշտոնական կայքում:

## **2. ՄՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԵՆՏՐԱԿԱԼԻ ԿՎԱԿՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏԱՐԻՐ ԶԻՆՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

6. Մպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող են համարվում հետևյալ քաղաքացիները

1) սույն կարգի 3-րդ կետի համաձայն դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 4 տարվա ընթացքում օլիմպիական մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի առաջնություններում (մեծահասակների կամ երիտասարդների կամ պատանիների) կամ օլիմպիական խաղերում կամ եվրոպական խաղերում կամ պատանեկան օլիմպիական խաղերում կամ համաշխարհային ունիվերսիադայում 1-5-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած կամ առաջիկա օլիմպիական կամ պատանեկան օլիմպիական խաղերի մասնակցության վարկանիշ ձեռք բերած մարզիկները, շախմատի համաշխարհային օլիմպիադայում 1-5-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները կամ շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում 1-3-րդ տեղերը գրաված և առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները:

2) սույն կարգի 3-րդ կետի համաձայն դիմումը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում Միջազգային օլիմպիական կոմիտեի կողմից ճանաչված, միջազգային ֆեդերացիաների կողմից կառավարվող մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների կամ երիտասարդների կամ պատանիների առաջնությունում կամ եվրոպական խաղերում կամ համաշխարհային ունիվերսիադայում 1-3-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները, Արցախում գործող մյուս մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների կամ երիտասարդների կամ պատանիների առաջնությունում 1-3-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները:

3) Արցախի ֆուտբոլի ազգային հավաքականների (պատանեկան, երիտասարդական և մեծահասակների) անդամ հանդիսացող մարզիկները, սակայն յուրաքանչյուր հավաքականի կազմում ընդգրկված մարզիկների ընդհանուր թվից ոչ ավելի, քան պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա 15 մարզիկների:

4) օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության քաղաքացիություն ստացած և Արցախի Հանրապետության դրոշի ներքո միջազգային առաջնություններին մասնակցող մարզիկները:

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պայմանները բավարարող քաղաքացուն Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ տարկետում տրվում է առավելագույնը չորս տարի ժամկետով՝ բացառությամբ Արցախի ֆուտբոլի պատանեկան և երիտասարդական ազգային հավաքականների մարզիկների, որոնց տարկետում է տրվում մինչև երկու տարի ժամկետով: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ տրված տարկետման ժամկետի ընթացքում մարզաձևերի ազգային ֆեդերացիաները յուրաքանչյուր գորակոչի ժամանակ նախարարություն և քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացրած ստորաբաժանում են ներկայացնում տեղեկատվություն քաղաքացու կողմից համապատասխան մարզաձևի ազգային հավաքականում ընդգրկված լինելու վերաբերյալ: Եթե ներկայացված տեղեկատվության համաձայն քաղաքացին ընդգրկված չէ համապատասխան մարզաձևի ազգային հավաքականում, ապա նախարարությունը Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում քաղաքացուն տրված տարկետումը դադարեցնելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որի ընդունումից հետո քաղաքացին հայտարարված գորակոչի շրջանակներում ենթակա է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի:

8. Քաղաքացուն տրված տարկետման ժամկետի ավարտից հետո սպորտի բնագավառում նշանակալի նվաճումների համար քաղաքացուն կրկին կարող է տրվել տարկետում՝ սույն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով, ընդ որում, կրկին տարկետում տալու հարցը սույն կարգի պահանջներին համապատասխան քննարկելիս հաշվի չեն առնվում նախկինում տարկետում տրամադրելու համար հիմք ընդունված պայմանները:

9. Սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն քաղաքացուն տարկետում կարող է տրամադրվել ոչ ավելի, քան քաղաքացու 26 տարին լրանալու օրը:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 886-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 4-Ի N 409-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 14-ի N 301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 409-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 63-րդ կետի «7,5 և բարձր» բառերից հետո լրացնել «, իսկ Արցախի Հանրապետության բուհերի վճարովի թափուր տեղերի համար դրական գնահատական է համարվում 6,00 և բարձր» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հուլիսի 13-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 891-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 709 և 2009 թվականի հունվարի 29-ի N 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N385-Ն որոշմամբ սահմանված N4 հավելվածի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բաժինը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 օգոստոսի 2021թ.

N 892-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 6-ի «Միանվագ դրամական օգնության մասին» N 133-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշմամբ հաստատված՝

ա. թիվ 1 հավելվածի 6-րդ կետում «աշխատակազմի սոցիալական ծառայության համապատասխան տարածքային գործակալության (այսուհետ՝ գործակալություն)» բառերը փոխարինել «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային բաժնի (այսուհետ՝ տարածքային բաժին)» բառերով,

բ. թիվ 1 հավելվածի 7-րդ, 8-րդ, 15-րդ, 19-րդ, 21-23-րդ կետերում, թիվ 3, 4, 5 հավելվածներում «գործակալություն» բառը և նրա համապատասխան հոլովածները փոխարինել «տարածքային բաժին» բառերով և նրանց համապատասխան հոլովածներով,

գ. թիվ 1 հավելվածի 10-րդ կետում «պահանջագրերը գործակալությունների կողմից նախարարություն են» բառերը փոխարինել «պահանջագիրը գործակալության կողմից նախարարություն է» բառերով,

դ. թիվ 6 և թիվ 7 հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

10 օգոստոսի 2021թ.

N 893-Ն

ք. Ստեփանակերտ

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴՈՒՐՄ ՄՆԱՑԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ՝

1) 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրում հաշվառված քաղաքացու մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է 200 000 ՀՀ դրամի չափով թաղման նպաստ (այսուհետ՝ թաղման նպաստ)՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) 2021 թվականի ընթացքում սույն կետի 1-ին ենթակետով սահմանված թաղման նպաստի վճարումներն իրականացվում են Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի «Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» ծրագրի միջոցներից:

2. Հաստատել թաղման նպաստի նշանակման ու վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԿԱՐԳ**  
**ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված պատերազմական գործողությունների (այսուհետ՝ պատերազմական գործողություններ) հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրում հաշվառված քաղաքացու (այսուհետ՝ տեղահանված քաղաքացի) մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ (այսուհետ՝ թաղման նպաստ) նշանակելու և վճարելու հետ կապված հարաբերությունները:

2. Թաղման նպաստ նշանակվում է, եթե տեղահանված քաղաքացին 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հաշվառված է եղել պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրում ու մահացել և հուղարկավորվել կամ հուղարկավորվել է Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում:

3. Թաղման նպաստը նշանակվում է տեղահանված քաղաքացու մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին (անկախ քաղաքացիությունից և հաշվառումից) (այսուհետ՝ հուղարկավորությունը կատարած անձ)՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կենտրոնական բաժնի (այսուհետ՝ կենտրոնական բաժին) կողմից:

4. Թաղման նպաստ չի նշանակվում, եթե տվյալ տեղահանված քաղաքացու մահվան դեպքում՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով կամ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքով թաղման նպաստ է սահմանված նրա հուղարկավորությունը կատարած անձի համար:

2) «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքով հուղարկավորության նպաստ է սահմանված նրա հուղարկավորությունը կատարած անձի համար:

3) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով նրա հուղարկավորության և (կամ) գերեզմանի բարեկարգման, տապանաքարի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման պետական բյուջեի հաշվին:

4) Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի N 273-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ նրա ծնողը կամ խնամակալն ունի չափահասության նպաստ ստանալու իրավունք:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2082-Լ որոշմամբ հաստատված կարգով նրա ընտանիքին վճարվել է միանվագ դրամական օգնություն:

5. Թաղման նպաստ նշանակելու համար տեղահանված քաղաքացու հուղարկավորությունը կատարած անձը գործակալության ցանկացած տարածքային բաժին (այսուհետ՝ տարածքային բաժին) է ներկայացնում՝

1) գրավոր դիմումը (այսուհետ՝ դիմում):

2) իր անձը հաստատող փաստաթուղթը և պատճենը:

3) իր հանրային ծառայությունների համարանիշը և պատճենը կամ վավեր սոցիալական քարտն ու պատճենը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը:

4) տեղահանված անձի մահվան վկայականը և պատճենը:

5) «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ «Արցախբանկ» ՓԲԸ) բացված բանկային հաշվի մասին տեղեկանքը կամ վճարային քարտի տրամադրման և սպասարկման պայմանագիրն ու պատճենը:

6) եթե տեղահանված անձի մահվան վկայականը տրված է օտարերկրյա պետության (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության) իրավասու մարմնի



կողմից, կամ, եթե Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված մահվան վկայականում կատարված գրառման համաձայն, տեղահանված անձը մահացել է օտարերկրյա պետությունում՝ նրան Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորելու փաստը հաստատող փաստաթուղթը.

7) գրավոր հայտարարություն՝ որում նշվում է.

ա. մինչև գրավոր դիմումը ներկայացնելու օրը տվյալ տեղահանված քաղաքացու մահվան դեպքով նրա հուղարկավորությունը կատարած անձին կամ ընտանիքի անդամներից մեկին կամ խնամակալին սույն կարգի 4-րդ կետում նշված որևէ տեսակի նպաստ կամ հատուցում կամ միանվագ դրամական օգնություն վճարված չլինելու մասին,

բ. թաղման նպաստ վճարելուց հետո տվյալ տեղահանված քաղաքացու մահվան դեպքով նրա հուղարկավորությունը կատարած անձին կամ ընտանիքի անդամներից մեկին կամ խնամակալին սույն կարգի 4-րդ կետում նշված որևէ տեսակի նպաստ կամ հատուցում կամ միանվագ դրամական օգնություն վճարվելու դեպքում թաղման նպաստի գումարը պետական բյուջե վերադարձնելու պարտավորության մասին:

6. Դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ընդունելու ժամանակ տարածքային բաժնի մասնագետը՝

1) դիմումում լրացված տվյալները համեմատում է անձը հաստատող փաստաթղթի և ներկայացված մյուս փաստաթղթերի բնօրինակների տվյալների հետ.

2) փաստաթղթերի բնօրինակները համեմատում է դրանց պատճենների հետ՝ առանց դրանց տեքստերը վնասելու, պատճենների բոլոր էջերի վրա կատարում է «Համապատասխանում է բնօրինակին» գրառումը և ստորագրում.

3) տեղահանված անձի մահվան վկայականի բնօրինակի դարձերեսին կատարում է «Թաղման նպաստի դիմումն ընդունված է» գրառումը և ստորագրում.

4) հուղարկավորությունը կատարած անձին վերադարձնում է սույն կարգի 5-րդ կետի 2-5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերի բնօրինակները (բացառությամբ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին և «Արցախբանկ» ՓԲԸ-ում բացված բանկային հաշվի մասին տեղեկանքների) և տալիս ստորագրված ծանուցում՝ նշելով դիմումն ու սույն կարգի 5-րդ կետում նշված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալու օրը, ամիսը և տարին:

7. Տարածքային բաժինը (բացառությամբ՝ կենտրոնական բաժնի) դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ընդունելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է կենտրոնական բաժնի՝ կից գրության մեջ նշելով հուղարկավորությունը կատարած անձի կողմից դրանք ներկայացվելու օրը, ամիսը և տարին:

8. Թաղման նպաստ նշանակվում է, եթե դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տարածքային բաժնի են ներկայացվել տեղահանված անձի մահանալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

9. Կենտրոնական բաժինը դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ստանալուց (ընդունելուց) հետո եռօրյա ժամկետում ստուգում է թաղման նպաստ նշանակելու հիմքերը և ընդունում թաղման նպաստ նշանակելու կամ թաղման նպաստ նշանակելը մերժելու որոշում:

10. Թաղման նպաստ նշանակելու կամ թաղման նպաստ նշանակելը մերժելու որոշումը ձևակերպվում է կենտրոնական բաժնի պետի կարգադրությամբ:

11. Թաղման նպաստ նշանակելը մերժելու մասին կենտրոնական բաժնի որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կամ դատական կարգով:

12. Թաղման նպաստ նշանակելը մերժվում է, եթե.

1) տեղահանված քաղաքացին 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հաշվառված չի եղել պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրում.

2) տեղահանված քաղաքացին մահացել է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը.

3) տեղահանված քաղաքացին մահացել և հուղարկավորվել է օտարերկրյա պետությունում (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության).

4) տեղահանված քաղաքացու մահվան դեպքով նրա հուղարկավորությունը կատարած անձի կամ ընտանիքի անդամներից մեկի կամ խնամակալի համար սահմանված է սույն կարգի 4-րդ կետի 1-4-րդ ենթակետերում նշված որևէ տեսակի նպաստ կամ հատուցում կամ վճարվել է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետում նշված միանվագ դրամական օգնություն.

5) դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տարածքային բաժին են ներկայացվել տեղահանված անձի մահանալու օրվանից մեկ տարի հետո:

13. Թաղման նպաստ նշանակելը մերժելու դեպքում կենտրոնական բաժինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է հուղարկավորությունը կատարած անձին՝ նշելով մերժելու պատճառները և որոշումը բողոքարկելու կարգը:

14. Թաղման նպաստը վճարվում է կենտրոնական բաժնի կողմից թաղման նպաստ նշանակելու մասին որոշման ընդունման ամսվան հաջորդող ամսվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ում բացված հաշվին փոխանցելու միջոցով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

11 օգոստոսի 2021թ.

N 896-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի օգոստոսի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ</b>	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
<b>08</b>			<b>ՀԱՆԳԻՄՏ, ՄՇԱԿՈՒՑԹ ԵՎ ԿՐՈՆ</b>	-	-	10 000,0	-
	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	10 000,0	-
		1	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	10 000,0	-
		<b>02</b>	Մարզական միջոցառումներ	-	-	10 000,0	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	-	10 000,0	-
<b>09</b>			<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	(10 000,0)	-
	6		<b>Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ</b>	-	-	(10 000,0)	-
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	(10 000,0)	-
		<b>05</b>	Դասագրքերի, ուսումնասիրության, ուսումնառության, մասնագիտական գրականության ձեռքբերում	-	-	(10 000,0)	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	-	(10 000,0)	-

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

12 օգոստոսի 2021թ.

N 900-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ՆՈՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 140-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների նոր հերթական ընտրությունների օր նշանակել 2021 թվականի հոկտեմբերի 10-ը:

2. Հաստատել Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող համայնքների ցանկը, որոնցում կանցկացվեն նոր հերթական ընտրություններ՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության պետական կառավարման մարմինների, նրանց տարածքային մարմինների և շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ անհրաժեշտ աջակցություն և օգնություն ցուցաբերել Արցախի Հանրապետության կենտրոնական, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ տեղական ինքնակառավարման մարմինների նոր հերթական ընտրություններն օրենքով սահմանված կարգով և կազմակերպված անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի օգոստոսի 12-ի N 900-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ,  
ՈՐՈՆՑՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ  
ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ՆՈՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքը		Ընտրվող մարմինը	
		Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Ասկերանի շրջան</b>			
1	Խաչմաչ	Համայնքի ղեկավար	
2	Ծաղկաշատ	Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
<b>Մարտակերտի շրջան</b>			
1	Նոր Ղազանյի	Համայնքի ղեկավար	
<b>Մարտունու շրջան</b>			
1	Հերիեր	Համայնքի ղեկավար	

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«04» օգոստոսի 2021թ.

N 178

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ  
ԱՎՏՈՍՈՐԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ  
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 3-ի N 378-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Տրամադրել՝**

1) **անհատ ձեռնարկատեր Կարեն Կառլենի Նարիմանյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00779 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2) **ֆիզիկական անձ՝ Մերսիկ Արշավիրի Ավանեսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00521 լիցենզիայի N00002 ներդիր:

**2. Դադարեցնել՝**

1) **ֆիզիկական անձ Էդիկ Սուրենի Գաբրիելյանի** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00593 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2) **«Հաղորդստրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՈՆ00735 լիցենզիայի և լիցենզիայի N00001, N00002 ներդիրների գործողությունները:

3) **անհատ ձեռնարկատեր Ռոբերտ Մուշեղի Ավետիսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00742 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

4) **ֆիզիկական անձ Մերսիկ Արշավիրի Ավանեսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00521 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Հայկ Խանումյան**